

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԼՈՅՍԸ»

(Ներսէս Արք. Պօգապալեան)

Վերջերս 1997 թուականի հենց առաջին օրերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւնը լոյս ընծայեց Ներսէս Արք. Պօգապալեանի վերջին տարիների ֆարոգների եւ յօդուածների «Ուխտագնացութիւն դէպի լոյսը» խորագիրը կրող ժողովածուն: Յատկանշական է որ իւրաքանչիւր ֆարոգին յաջորդող էջին տեղադրուած է նիւթի քովանդակութեանը համապատասխան բանաստեղծութիւն: Անշուշտ, որպէս բանաստեղծ Ներսէս սրբազանը նոր անուն չէ մեր պոեզիայում, մանաւանդ մերօրեայ հոգեւոր պոեզիայում: «Բանաստեղծական իր գրչարուեստով ծանօթ անուն մըն է Ներսէս Սրբազանի անունը՝ յաճախ Ներսէս Վանական պարզ գրչանունով սփռուած: Այս հատորով ան նոր տարածք մը կ'անելցնէ իր գրական բեղուն վաստակին: Բանաստեղծական արուեստով ցարդ արտայայտուած գրչի այս սպասաւորը կրօնական-հոգեւոր, կրօնագիտական-եկեղեցագիտական, սուրբ-գրական եւ բարոյագիտական ու նաեւ ազգասիրական խոկումներով, խորհրդածութիւններով, վերլուծումներով, գիտելիքներով սննդաւորուած հատոր մըն է որ այս անգամ կը մատուցանէ իր ժողովուրդին: Վստահաբար մեր ընթերցասէր ժողովուրդին կողմէ պիտի արժանանայ սիրալիր ընդունելութեան», գրքի առաջաբանում գրում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Հայրապետը: Յիրաւի սրբազանի բանաստեղծութիւնները, որոնք մեծաւ մասամբ ներթողներ են, ընթերցողի միտքն ու հոգին շարժում են առաջին հերթին իրենց ջերմ ու անպաճոյճ, պարզ ու մտերմիկ շարադրանքով, ասելիքն

աղօթքի մաքրութեամբ ու անկեղծութեամբ մատուցելու կերպով: Նրա բանաստեղծական հերոսը մեզ ուղեկցում է կատարեալ սիրոյ, մաքրամաքուր լոյսի, յաւերժութեան փամբաների աշխարհը, ուղեկցում է այնտեղ, ուր ճշմարիտ լոյսի աղբիւրը մաքրում, ջերմացնում է մեր հոգու ու սրտի երակներում սառած արիւնը, անխորտակ ու փոխադարձ սիրոյ կամուրջներ ձգում մեր ու Աստծոյ միջեւ:

Մարդու գոյութիւնն այս մոլորակի վրայ հազարամեակների պատմութիւն ունի, հազարամեակներով են հաշուում նաեւ մեր հայ ժողովրդի այս հողակտորի վրայ ապրելու ու արարելու ժամանակաշրջանները: Այրարատեան երկիր կոչուի թէ Նայիրեան, Թորգոմայ տուն թէ Հայաստան աշխարհ, միեւնոյն է մեր արմատներն այստեղ են ձգուած, մեր երգն ու շունչն այս լեռնաշխարհում են սաւառնում, մեր սէրն ու կարօտը, մեր խինդն ու ուրախութիւնը, մեր ցաւն ու կսկիծն այս հողում են ծուարում, ու մեր տենչերն ու ձգտումներն այս հողից են ոգի առնում: Եւ ամենեւին էլ պատահական չէ, որ հայ ծնուած հոգեւորականը որքան էլ որ խօսելու լինի քրիստոնէական համամարդկային ճշմարտութիւնների մասին, չի կարող չկարեւորուել իր ազգային արժէքները, չի կարող չհոգալ իրեն ու իր ժողովրդին բաժին ընկած այս մի կտոր հողի մասին: Նա իր ժողովրդի պատմութեան, մշակոյթի, աւանդոյթների տէրն է ու կրողը: Նրա ցաւը ծնում է իր ցեղի ցաւից, ցաւը գալարում երակներում եւ յոյսի ու հաւատի շողերով պարուրուած դառնում արարչահիմն ու արարչահունչ երգ: Ներսէս Սրբազանի երգն արմատներ

ունի, խորն ու հեռուն գնացող արմատներ։
Եւ տեղ-տեղ ու յաճախակի կտրուած այդ
արմատների ցան ատամների տակ առած
շարունակում է իր արեան յաւերժող
կանչի պատգամը, շարունակում
վեհուքեամբ ու արժանապատուօրէն
ապաւինելով ու հաւատալով ամենատես
ու կատարեալ Աստուծոյ շնորհաբեր լոյսին։
Աղօթք է որ աւանդուել է դարերով։
Նրանում դարերի ոսկեհնչիւն կարկաչը
կայ, դարերի տրտմութիւնն ու թախիժը,
սակայն ոչ երբեք՝ յուսահատութիւնը։

*Ինձ դարձրիր անօթ վերին կոչումնի
սպասարկութեան,*

*Վառեցիր իմ մէջ ջահը հաւատի
հանդէպ Արարչի եւ հայրենիքի*

*Սիրելու ազգն իմ, հարազատներն իմ,
լոյս ու աշխատանք։*

*Քեզ քիւր օրհնութիւն, գոհ եմ Տիրոջից,
որ եղել եմ ես*

*Քո իսկ զաւակը եւ քո միջոցով ծնուել
եմ տանջուած,*

*Բայց խաղաղասէր, բայց խաղաղարար
իմ ազգի ծոցում։*

*Եւ ես, որպէս հայ, իմ ծնուած օրից
քեզ հետ եւ բազում ազգակիցների,*

*Բռնադատուել եմ նաշակելու միշտ
դառնութիւն ու վիշտ,*

*Դրանով էլ հենց արժանանալով
մեծագոյն պատուին՝*

*Դառնալու խոնարհ չարչարակիցը
քիւր չարչարանաց
Յիսուս Քրիստոսի։*

Թէպէտ «Ուխտագնացութիւն դէպի
լոյսը» իր բովանդակութեամբ փարոզագիրք
է եւ այստեղ ի մի են բերուած Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի միաբան, դիւանապետ,
Հայաստանի Աստուածաշնչային
ընկերութեան եւ Հիմնիշխան յիշատակի
համահայկական բարեգործական
հիմնադրամի Հայաստանի մասնահիւղի
նախագահ Ներսէս Արքեպիսկոպոս
Պողոսեանի տարբեր տարիների ու
տարբեր առիթներով խօսած փարոզներն
ու գրած յօդուածները, սակայն նրանցում
առկայ շունչն ու ոգին վերստին համահունչ
են բանաստեղծականին։ Ինչ էլ եւ ինչի
մասին էլ որ փարոզում է նա նպատակը
մեզ ուղղուած հոգեւոր ու մտաւոր,
անցածի ու գալիքի արժէքների
ծառատունկի պատուէր է։

*... Ծառն ընտանիք է ճիւղերով,
Շառաւիղ է նոր ոստերով,
Ծառն արմատ է հաստատ, գորեղ,
Տապան է նա ազատագրող։*

Եւ այս ազատագրող տապանի
խորհրդով էլ շնչում է «Ուխտագնացութիւն
դէպի լոյսը» գիրքը։

Ա. Ս.